

Աստուածային արգարութեամբ մարդկային մթութեան մէջ։ Կտաւի վրայ որքան էլ գեղեցիկ նկարուած լինի խաւրոյկը, նրանից ջերմութիւն չի յառաջանալ ցրտութեան մէջ և ոչ լոյս՝ մթութեան մէջ։ Եթէ ուղէին մի որ և է կոշտ վայրենու բացատրել կրակի ներգործութիւնը, որի բարերար ազդեցութեանը նա բոլորովին անծանօթ լինէր, ամենից լաւն է մի խարոյկ վառել, այն ժամանակ վայրենին իսկոյն և եթ կհասկանար, որ կրակով ապրելը շատ լաւ է և յարմարաւոր, քան առանց կրակի։ Այդպէս է և մեր հաւատը, նրա ոյժը խօսքերի մէջ չէ և ոչ նրա մասին եղած պատմութիւնների, այլ նրա համաձայն վարած կեանքի մէջն է։ Հաւատի մասին եղած խօսքերը՝ ծառի վրայի տերևներն են, իսկ մեր գործերը, զգացմունքներն ու սրտի շարժումները—գրանք պտուղներն են։ Մեր սեպհական թղենին, մեր կեանքը, ինչով է ծածկուած։ Մի միայն տերևներով, թէ տերևների ներքոյ կան նաև պտուղներ։ Մենք չենք մտածում դատապարտել, մեզ բոլորին Դատողը—Աստուած է, այլ ուզում ենք հարցնել որպէս ուղղեկիցների, այնտեղ ենք գնում արդեօք, այն ենք անում, ինչ որ պէտք է. խելքի և սրտի կենդանացուցիչ ոյժերը գէպի պտուղն ենք ուղղում, թէ մի միայն գէպի տերևները։

Պետրովից քաղմ. Գրիգոր Բենյ. Նոր-Արեւեանց

ՀՈՈՎՄԱՅՆՅԻ ՀԱՐԻՐԱՊԵՏԸ

Ք. Մարիվէ

Անցաւ մեծ շաբաթը, և այդ օրը ոչ մի անսպասելի բան չ'պատահեց։ Եօթնեկի առաջին օրուայ արշալոյսը դեռ նոր էր սկսել բացուիլ, երբ յանկարծ սաստիկ գետնաշարժ եղաւ*)։ Ղուկկիանոսն ու իւր զինւորները սար-

*) Մատթ. Գլ. 28, հմբ. 2.

սափից գետին փռուեցան, բայց նրանք, և միայն նրանք, — այդ հեթանոսները — տեսան նրա յարութիւնը:

Քրիստոսի աշակերտներն ու հետևողները ոչինչ չ'զիտէին այդ մասին, մինչև անգամ չէին էլ սպասում*), ինչպէս և չ'զիտէին և այն, որ հրէից կարդացողներն ու քահանայապետները ուսումնասիրած լինելով նրա մասին եղած գրութիւնները, մի ինչ-որ սպասում էին: Այդ պատճառով էլ հռովմայեցի զինւորներ կանգնեցրել էին պահպանելու համար այն այրը, ուր գրուած էր Խաչեցեալի մարմինը, Որը յարութիւն պիտի առնէր, եթէ նա էր Մեսիան:

Ոչինչ չ'զիտէր և Մարիամ Մագթաղինացին՝ հարիւրապետի ու պահապանների մասին, և շտաբն անցնելուց յետոյ, գիշեր ժամանակ դուրս գալով տնից, ամբողջ ճանապարհին, քաղաքից մինչև Յովսէփի պարտէզը, մտածում էր այն մասին, թէ ո՞վ արդեօք կ'օգնէ իրեն՝ գերեզմանի դրան քարը գլորելու. ինքը ինչպէս կ'ին, անկարող էր այդ անել մինակ: Եւ ահա, երբ նա տեսաւ, որ կափարիչն արդէն մէկդի է ձգուած, կաշիք, որ թշնամիներն արդէն գողացել են Խաչեցեալի մարմինը, և աչքերն արտասուքով լցուած՝ վազեց դէպի քաղաք: Մինչդեռ հարիւրապետն ու զինւորներն էլ մեծ շտապով գնացել էին Նրուսաղէմ ու այնտեղ արդէն սկսել էին պատմել եղելութիւնը թէ պալատում և թէ հրէաներին:

Մարտավեցան հրէաները: Ահա նա, Մեսիան, որ աշխարհի հզօր տիրապետողը չէ, ինչպէս այդ պահանջում էր ժողովրդի ինքնասիրութիւնը, փառասիրութիւնն ու արծաթասիրութիւնը՝ հապա՝ թագաւոր է մի ուրիշ աշխարհի, Որն և խաչի վրայ նահատակուեց... Ո՛չ, ո՛չ, դա անկարելի է, այդպէս չ'պէտք է լինի: Անկարելի է այդպէս ընդունել: Եւ նրանք նորից սկսեցին արծաթ բաժնել հռովմայեցոց զինւորներին: Իսկ հարիւրապետին ու նրա ընկեր երկու զօրապետներին, որոնք մերժեցին

*) Յովհան. Գլ. 20, հմբ. 9.

նրանցից կաշառք ընդունել, սկսեցին ատել այնպէս, ինչպէս ատում էին իրեն, Խաչեցեալին . . .

«Յարեաւ Քրիստոս, նա յարեաւ։ Եւ, այսինքն՝ մենք այդ տեսսք.— իբրեւ ականատես՝ մեծ հրճուանօք պատմում ու կրկնում էր Ղունկիանոս,— հապա ինչպէս. դուք ուզում էք, որ ես լռեմ»։ Եւ ամբոխը հաւաքուելով հարիւրապետի շուրջը, մտիկ տուեց ու սկսեց հաւատալ։

Մինչ այս մինչ այն՝ Յիսուս էլ սկսեց երեսւ իւր աշակերտներին։ Նրա յարութիւն առնելու լուրը արդէն սկսել էր տարածուել ամենուրեք։ Հրէից առաջաւորներն ու մեծամեծները գլուխները կորցրած, սկսեցին ժողովներ կազմել՝ հէնց սկզբից կրօնական ընդհանուր շարժման առաջն առնելու մասին խորհրդակցելու։

Ահաբեկուած հռովմայեցոյ փոքրօգի կառավարչութիւնը, որին ամեն բան սխալ էին բացատրել,— մասնակցում էր հրէաների այս խորհրդակցութեանց։ Ծերերն ու գիտնականները կառավարչապետին այնպէս էին բացատրել, որ իբր թէ Խաչեցեալ և Յարուցեալ Յիսուսի հաւատը այնպիսի վտանգ է սպառնում, որին չեն կարող դիմագրել ոչ մի աշխարհային թագաւոր կամ կառավարիչ. բոլորը կը ջնջուին, կը սրբուին աշխարհի երեսից։ Եւ վարչութիւնը հաւատաց, որովհետեւ փաստերն, ըստ երևոյթին, հաստատում էին այդ սպառնացող վտանգի ճշտութիւնը։

Ղունկիանոս հարիւրապետը մինչև այդ ժամանակ ամենից յարգուած՝ ինչպէս մի ազնիւ զինուոր, Կեսարից սիրուած ու զինուորական բարձր աստիճանների արժանացած, այժմ՝ յանկարծ նկատուեց իբրեւ մի դաւաճան։ Մարտի 16-ից յետոյ նա իւր կամքով հրաժարուեց զինուորական կոչումից՝ իւր երկու ստորադրեալների հետ միասին, որոնք նոյնպէս թողել էին իրենց լէգէօնները, և սկսեց միայնակեաց կեանք վարել, հրաժարուելով իւր առաջուայ բարեկամների հետ յարաբերութիւն ունենալուց։ Նրան հսկողութեան ենթարկեցին իւր երկու ընկերների հետ։ Դուրս եկաւ, որ նրանք յարաբերութեան մէջ էին մտել Խաչեցեալ Յիսուսի աշակերտների հետ ու

նրանցից մկրտութիւն ընդունելով՝ պատրաստուած էին ուր—որ գնալու։ Իրաւ, կարճ ժամանակից յետոյ նախկին հարիւրապետը ուղևորուեց դէպի Կապադովկիա՝ իբրեւ քարոզիչ, այն ժամանակ հրէից առաջաւորները սկսեցին համոզել վարչութեանը Ղուկիանոսից միանգամ ընդ միշտ ազատուելու համար միջոցներ ձեռք առնել։ Բայց հրէաներին դիւրին էր ասել «ազատուել»։ Արդարեւ ի՞նչ պէս կարելի էր ազատուել մի մարդից, որն օրէնքի ընդգէմ ոչինչ գործած չէր և բացի դրանից անձամբ յայտնի էր Կեսարին։ Միթէ դա մի իրաւագօւրկ հրէայ էր...

Բայց և այնպէս, վախեցած՝ հրէաների գիտնականներից, վախեցած և իւր սեփական դիտողութիւններից, վարչութիւնը որոշեց սաստկացնել Ղուկիանոսի վրայ եղած հսկողութիւնը։

Այդ միջոցներին Ղուկիանոսն արդէն քարոզում էր Կապադովկիայում, և նրա քարոզը, ինչպէս մի ականատեսի, այնքան անկեղծ էր, այնքան ջերմ ու ոգևորուած, որ այդ կարճ ժամանակամիջոցում, համարեա, ամբողջ Կապադովկիան արդէն ընդունել էր նոր հաւատքը։ Այն ժամանակ հրէից առաջաւորների բարկութիւնը չափն ու սահմանն անցաւ...

Մերակոյտի անդամներն ու հրէից վարդապետները, սաստիկ վրդովուած կառավարչի դէմ նրա համար, որ նա թոյլ էր տալիս քարոզելու, նորից ժողովուեցան, անէծք ու նախատինք կարգացին նրա հասցէին ու մեղադրեցին նրան իւր փոքրօգութեանը համար, բայց միևնոյն ժամանակ նրանք եկան այն եզրակացութեան, որ նրա փոքրօգութիւնը յոյս է տալիս իրենց՝ նրան կաշառելու։ Հարկաւոր էր միայն առատաձեռն լինել, և հրէից բարձր դասակարգը, որքան էլ որ այդ նրանց թանկ արժէր, որոշեց զոհել իւր անձնական հարստութիւնը՝ իւր նպատակին հասնելու համար։

Վարչութիւնն ընկճուեց, մամոնան իւր դերը կատարել էր... Քիչ ժամանակ անցնելուց յետոյ հրէաների թելադրութեամբ գրուած մի զրպարտութեան թուղթ

ուղարկուեց Տիրերիոս կայսեր, . . . Նախկին հարիւրապետը մեղադրուում էր այդ թղթով՝ կայսրութեանը դաւաճանելու մէջ, մեղադրուում էր նրանում, որ իբր թէ Ղունս կիանոսը չէ ուղում ընդունել Հռովմի կայսրին իբրեւ թագաւոր, հապա գտել է մի ինչ-որ ուրիշ թագաւոր և աշխատում է ժողովուրդը դէպի նրան գրաւելու:

Տիրերիոսը, Ռէյնի ու Պանուրի լէգէօնների ապրտամբութիւնից յետոյ, մանաւանդ խիստ էր դէպի «ազատ մտածող» զինւորականները, և հրէաները, տեղեակ այս հանգամանքին, չը սխալուեցին իրենց հաշուի մէջ, ուղարկելով նրան այնպիսի մի թուղթ:

Պատասխանն եկաւ՝ բուրգերով շրջապատուած, ապառաժեայ, մառախլոպատ ամրոցից, ուր կղզիացած ապրում էր Կեսարը: Հրէից բարձր դաստիարդը ազատ շունչ քաշեց. Տիրերիոս հրամայել էր՝ կտրել դաւաճանի գլուխը, և հրէաները համոզեցին կառավարչապետին, որ անհրաժեշտ է բերել Երուսաղէմ՝ այդ գլուխը կտրելուց յետոյ՝ եղելութիւնն ստուգելու համար:

Կապաղովկիա զրկուեցին Ղունկիանոսի նախկին ստորադրեալ զօրականներից երկուսը, նրա գլուխը կտրելու պատուէր ստանալով, եթէ նա չը հրաժարուի իւր թագաւորից ու չը զոհէ ժողովրդական աստուածներին:

Նախկին հարիւրապետն այդ ժամանակ ապրում էր իւր հօր դաստակերտում, և պահքով ու աղօթքով անգիտակցաբար պատրաստուում էր այն բաղդին, որը շուտով վրայ հասաւ նրան: Կենցաղավարութեան, ինչպէս և հագուստների, փոփոխութիւնը սաստիկ այլայլել էին նրա արտաքինը: Շատ քչերն այժմ պիտի կարողանային ճանաչել նրանում առաջուայ ռազմիկին: Եւ իրաւ, նրա ետեւից զրկուած զօրականները չկարողացան ճանաչել նրան: Սակայն ինքը, տեղեկանալով, որ իրեն սպասում է մարտիրոսական վախճան, պարզ երեսով, ուրախ ժպիտը դէմքին, դնաց գիմաւորելու իրեն պարօղ զինւորներին: Հաստատ չ'զիտնալով, թէ որտեղ է ապրում իրենց նախկին հրամանատարը, զինւորները, հանդիպելով նրան գի-

մեցին իրեն, խնդրելով, որ ցոյց տայ Ղուճկիանոսի տունը։ Արդէն երեկոյ էր, և Ղուճկիանոսը տեսնելով, որ երեսօսադէմից եկող զինւորները յոգնած են ու թուլացած, պատասխանելու փոխարէն, հրաւիրեց նրանց իւր տունը՝ հանգստանալու, խոստանալով առաւօտուն ցոյց տալ նրանց այն մարդի տունը, որին նրանք որոնում են . . . : Զինւորներն յօժարացան, Ղուճկիանոս տարաւ նրանց իւր հօր տունը և ծառաներին պատուիրեց ըստ արժանւոյն հիւրասիրել նրանց։

Ամբողջ երեկոն զինւորներն անցկացրին ճօխ սեղանի առաջ։ Դինին բացել էր նրանց լեղուն, և նրանք պատմեցին հիւրասէր տանուտիրոջ, թէ ինչ գործի համար նրանք ուղարկուած են . . . , բայց իսկոյն իրենք իրենց զսպելով, աղաչեցին Ղուճկիանոսին, որ այդ գաղանիքը ոչ ոք չիմանայ։ Ղուճկիանոսը անկեղծ ժպտում էր։ Երբոր տեղեկացաւ զինւորներից, թէ բացի իրանից, նրանց հրամայուած է գլխատել իւր երկու բարեկամներին ևս, նա սեղանից բարձրանալով, հիւրերից գաղտնի, մարդ ուղարկեց իւր վկայակիցների ետեւից։

Գիշերը վրայ հասաւ և, ճանապարհին յոգնած ու գինու աղբեցութեան ենթարկուած, զինւորները քնեցին։ Այն ժամանակ Ղուճկիանոսն սկսեց ազօթել։ Նրա հօգին լուսաւորուեց, ոչ սարսափ և ոչ ավստոսանք նա չ'ողբաց՝ կեանքից բաժանուելու պատրաստուելիս։ Ընդհակառակը, նրա հօգին գերբնական հրճուանօք գրոհում էր դէպի դուրս՝ իւր հօղային նեղ բանտից, և երբոր հետեւեալ առաւօտը ծառաներն յայտնեցին նրան, թէ իւր պահանջած մարդիկն արդէն եկած են, նա դուրս ելաւ նրանց դիմաւորելու և գրկախառնուելով առաց. «Ուրախացէ՛ք, սիրելի բարեկամներ, հասաւ մեր ուրախութեան և աղափութեան ժամը։ Այսօր մենք միասին կը ներկայանանք մեր Տիրոջը, մեր Փրկչին, Որի և՛ մահը, և՛ թաղումը, և՛ յարութիւնը մենք մեր աչքերով տեսանք, այն, ուրախացէ՛ք»։ Այնուհետև նա պատմեց նրանց այն ամենը, ինչ որ լսել էր զինւորներից ու ներս տարաւ իւր տունը, որ-

տեղ զինւորականներն արդէն քնից զարթնած, սպասում էին տանաւորոջ, — որը խոտաղցել էր յայտնել նրանց Ղունկիանոսի բնակութեան տեղը, — և ճանապարհ ընկնելու համար պատրաստութիւն էին տեսնում: Շատ զարմացան զինւորները, երբոր առաքեալը մատնացոյց արաւ նրանց իւր վրայ՝ ասելով, որ իսկ ինքն է զինւորական կոչումից ու աստիճաններից հրաժարուած այն հարիւրասպետը, որին նրանք որոնում են:

Նրանք չէին ուզում հաւատալ, որ դա իրենց նախկին իշխանաւորն է, և շփոթուած այս անսպասելի իրողութիւնից, — շփոթուած նրա համար, որ իրենց վիճակուել է կեանքից զրկել այն մարդուն, որը նրանց կերակրել, պահպանել, տաքացրել ու գութգութացրել էր, — նրանք վճռեցին հրաժարուել իրենց տրուած հրամանը կատարելուց: Բայց Ղունկիանոսն ընդգիմացաւ դրան: Նա իւր սիրտը բաց արեց նրանց առջև, պատմեց, թէ ինչպէս նա, իւր երկու ընկերների հետ, տեսան Քրիստոսի յաբութիւն առնելը, և թէ ինչպէս նրանք բոլոր սրտով սիրեցին Յարուցեալին, և աղաչեց, որ շուտով իրեն զրկեն Տիրոջ մօտ, Որին ինքը՝ վաղուց ցանկանում է տեսնել: Պէտք սրանից աւելի ուրիշ ոչ մի լաւ բանով չէր կարող վճարել իմ ցոյց տուած հիւրասիրութիւնը», կրկնում էր կապաղովկիացի քարոզիչը:

Զինւորները տատանւում էին: Այդ միջոցին Ղունկիանոսն, իւր երկու ընկերների հետ, թաղման սպիտակ շորեր հագնելով, կանչեց իւր մօտ ընտանիքի անդամներին, երկար խօսեց նրանց հետ, պատուիրեց, որ թաղեն իւր մարմինը մօտակայ բլրակի վրայ, հրաժեշտ տուեց ամենքին ու ծնկի գալով գլուխը դրեց սրի տակ: Ընկերները հետևեցին նրա օրինակին:

Գլուխները միմեանց ետևից գետին գլորուեցին: Զինւորները վերցրին իրենց նախկին իշխանաւորի գլուխը, դրին տօպրակի մէջ ու տարին Երուսաղէմ:


Հրէից իշխաններն ու ծերերն անհամբեր սպասում էին նրանց վերադարձին: Համադուելով, որ նրանց բերած

գլուխը, իրաւ, Ղունկիանոսինն է, հրէաները նրան ձգեցին քաղաքից դուրս՝ աղբանոցի մէջ, որտեղ դիզոււմ էին ամբողջ քաղաքի կեղտոտութիւնը: Երկար ժամանակ այդ գլուխն ընկած էր այնտեղ, ցեխի ու կեղտի մէջ թաղուած, և միայն վերջին ժամանակները նրան ձեռք բերեց— տակաւին չը քայքայուած— մի խեղճ, կոյր ու վշտահար այրի կին, որին Ղունկիանոս յայտնել էր երազում*):

Կոյրը իւր սեփական ձեռքերով աղբի կոյտերը փորփորելով՝ գտաւ սուրբի գլուխը, և զգուշութեամբ համբուրելով նրան, բժշկութիւն ստացաւ իւր թէ մարմնական և թէ հոգեկան վշտերին: Այդ օրից նա մոռացաւ իւր անմոռանալի հանգուցեալների համար կրած վշտերը: Ինչպէս և Ղունկիանոսը, նա յանկարծ հասկացաւ, որ այս աշխարհը մի անցք է, մի ճանապարհ՝ դէպի մի ուրիշ աւելի լաւ գոյացութեան, հասկացաւ, որ ցաւն ու վիշտը ուղարկոււմ են մարդկանց՝ յաճախ ոչ իբրեւ նրանց պատիժ, հապա, ինչպէս Քրիստոս Ինքն ասաց ի ծնէ կոյրի մասին, «որպէս զի Աստուծոյ ողորմութիւնը ծագի նրանց վրայ», որ նրանք ճանաչեն ճշմարտութիւնը . . . :

Թարգմ. դպ. Նիկողայոս Դաւրեան.

Նոր Նախիջեւան
25 ապրիլի 1905 թ.



*) Սուրբի վարքագր. 16 հոկտ.